«Նոր ժամանակի կրթություն»
ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում»

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անտոնյան Լեյլի

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Հենրիկ Խաչատրյանի անվան թիվ 199 հիմն. դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
- ՀՊՁ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
- ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
- ԴԱՍԻ ՆՄՈՒՇ_ՕՐԻՆԱԿ
- ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
- ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր և աշխարհիկ արժեքները անընդհատ և արագ փոխվում են՝ մեր հարափոփոխ կյանքին ու կենսակերպին զուգընթաց: Երբեմն երեկվա աներկբա արժեքը այսօր անարժեք և սովորական է դառնում:

Արժեքը մեզ համար թանկ և կարևոր կողմնորոշումն է, առանց որի չենք էլ պատկերացնում մեր կյանքը: Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Մատաղ սերնդի առողջ արժեհամակարգի ձևավորումը եղել և մնում է կրթության պատասխանատուների ուշադրության կենտրոնում՝ կազմելով ուսումնական բոլոր ծրագրերի հիմքը:

21-րդ դարում հանրակրթությունը նպատակ ունի «ձևավորելու որոշակի կարողություններով զինված հայ քաղաքացի, որը պատրաստ է քննական վերլուծության ենթարկելու իրադրությունը, գործելու հանուն իր երկրի բարօրության, բարգավաճման»:[1] Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների, մասնավորապես՝ լեզվի և գրականության անգնահատելի դերը: Հայոց (մայրենի) լեզվի և գրականության (հայ գրականության) դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում: Առարկաների դասավանդման նպատակները հստակ ձևակերպված են հանրակրթության հիմնական ծրագրերի յուրաքանչյուր դասարանի համար նախատեսված վերջնարդյունքների մեջ: Հայոց(մայրենի) լեզվի և գրականության (հայ գրականության) ուսումնառության ընթացքում «ձևավորվում, զարգանում և կատարելագործվում են սովորողի անձնային

նկարագիրը, վերաբերմունքը կամ դիրքորոշումը իր երկրի, պետության, ազգային արժեհամակարգի, սեփական անձի և կյանքի հանդեպ»: [2]

Ուսումնական գործընթացի ընթացքում արժեքների դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են նաև ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ:

Ավելորդ չենք համարում նշել նաև, որ ուսուցիչներիս համար սովորողի արժեհամակարգի ձևավորման պատասխանատվությունն ու աշխատանքը չի սահմանափակվում միայն դպրոցական պատերի ներսում, զուտ դասաժամի ընթացքում:

Ըստ այդմ՝ հետազոտական աշխատանքի ընտրված թեման համարում ենք արդիական, և կփորձենք ներկայացնել մեր մոտեցումները՝ Հայոց(մայրենի) լեզվի և գրականության (հայ գրականության) ուսումնառության ընթացքում դասարանային և արտադասարանային միջոցառումների շնորհիվ սովորողի արժեհամակարգի ձևավորման խնդրի շուրջ:

---

[1]- ՀՊՉ, հաստատված Հավելված 2, ՀՀ կառավարության 2021թ.փետրվարի 4-ի N 136_Ն , 2010թ ապրիլի 8-ի N439_Ն

[2]- ՀՊՉ,ավելված 2, ՀՀ կառավարության 2021թ.փետրվարի 4-ի N 136_Ն , 2010թ ապրիլի 8-ի N439_Ն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ժամանակակից մանկավարժության համար գերխնդիր է սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները, որովհետև այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Հայոց(մայրենի) լեզվի և գրականության (հայ գրականության) ուսումնական բնագավառը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Գրականության իմացությունը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն գնահատել և ըստ անհրաժեշտության կիրառել ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր մշակույթը, ավանդույթները, փորձը: Հանրակրթական դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է լինի հայրենասեր և պատրաստ՝ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք, ունենա ազգային ինքնագիտակցություն, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը, ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում, գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգայինի դերը, գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը, գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական

վարպետությունը և այլն. . .

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում՝ ուսուցիչն առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական, տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի (դաս-դասարանային, անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) ընտրության միջոցով ուսուցիչն առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը՝ հաշվի առնելով ստորև նշված գործոնները

1) սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների գիտակցում և կատարում,

2) նպատակները, ինչպես նաև ուսումնադաստիրակչական և զարգացնող խնդիրները,

3) ուսումնական գործընթացի օրինաչափությունները և սկզբունքները,

4) դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումը,

5) սովորողներին ազգային և համաշխարհային մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու ՝ գրականության դասերի ուղղվածությունը,

6) դասերի ժամանակ համաշխարհային և ազգային գրականության համամասնության պահպանումը,

7)սովորողների մոտ տեղեկատվություն աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումը, դրանց հետ ինքնուրույն աշխատելու և հետևություններ

անելու կարողությունների մշակումը,

8) ստեղծագործական, զգացմունքային մթնոլորտի ձևավորումը, որը հենված է դասի բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա:

Հայոց(մայրենի) լեզվի և գրականության (հայ գրականության) ՝ Հանրակրթության պետական չափորոշչի դրույթների, պահանջների, դպրոցի յուրաքանչյուր աստիճանի կամ ծրագրի համար մշակված վերջնարդյունքների հիման վրա ձևավորված հիմնական հասկացություններից այս թեմային կառանձնացնենք մեր թեմային առնչակից **Ինքնություն** հիմնական հասկացությանը և**Վերաբերմունք** ու **Արժեորում** ենթահասկացությունները:

Հանրակրթության հիմնական ծրագրի 5-6-րդ դասարանների վերջնարդյունքներից առանձնացրել ենք, որ սովորողը պետք է՝

- հարգալից վերաբերմունք դրսևորի մայրենի լեզվի հանդեպ, չաղավաղի, չաղճատի լեզուն օտար բառերով և արտահայտություններով, արժեորի մայրենիի դերը իր կյանքում, գիտակցի նրա ազգապահպան դերը
- լինի հանդուրժող, այդ թվում նաև ընկերների այլակարծության դեպքում
- հաղորդակցվելիս հարգալից խոսքով իր վերաբերմունքը դրսևորի հասակակիցների և մեծահասակների նկատմամբ,
- լինի հոգատար, շրջահայաց, համագործակցող, կիրառի բարեկիրթ, քաղաքավարի բառեր, արտահայտություններ....

7-9-րդ դասարաններում զարգացվում և հավելվում են ներքոնշյալ վերջնարդյունքները՝

- արժեորի ազգայինը, սեփական ազգի հերոսական անցյալը, հայ գրականության դերը հայ ժողովրդի ինքնության պահպանության գործում

- վստահորեն համագործակցի համայնքի այլ անդամների հետ՝ ձևավորելով

թիմային մտածողություն

- լսի դիմացինին առանց ընդհատելու և դրսևորի հարգալից վերաբերմունք
- հայ գրողների կենսագրական փաստերի, նրանց հայրենանվեր գործունեության օրինակով զբաղվի ինքնադաստիարակությամբ, զարգացնի արդարամտություն, լայնախոհություն, համարձակություն, տոկունություն, հավասարակշռվածություն

- զարգացնի հետաքրքրություն գրքի և ընթերցանության հանդեպ՝ որպես ներդաշնակ անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում:

Ավագ դպրոցի հայոց լեզվի և հայ գրականության առարկայական չափորոշչում ևս մեծապես կարևորվում է դասավանդման ընթացքում «անհատի և քաղաքացու բարոյական կերպարի և արժեքային համակարգի» ձևավորման խնդիրը: «Ավագ դպրոցում հայոց լեզվի և հայ գրականության դասընթացը, բուն լեզվական և գրականագիտական գիտելիքներ տալուց բացի, պետք է համոզմունք մշակի ժողովրդի կյանքում և նրա ազգային նկարագրի վերջնական ձևավորման վերաբերյալ»[3]: Այնուհետև ընդգծվում է, որ հայ գրականության դասընթացի հիմնական նպատակներից մեկը «անհատի հոգևոր ու մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործմամբ նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝ մարդասիրություն, բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ»[4]:

Ապագան կերտողը, հայ հոգևոր արժեքները պահպանողն ու շարունակողը հենց

այդ սերունդն է լինելու, և նրա վաղվա գործելակերպն ու ազգապահպան դերը պայմանավորված է այսօր ձեռք բերած գիտելիքներով և դաստիարակությամբ, այլ կերպ՝ նրա ազգային հոգեկերտվածքի ձևավորմամբ:

Այս ամենի պատասխանատվությունն ընկնում է դպրոցի, հատկապես՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչի ուսերին:

---

[3]- ՀՊՉ, հաստատված Հավելված 2, ՀՀ կառավարության 2021թ.փետրվարի 4-ի N 136_Ն , 2010թ ապրիլի 8-ի N439_Ն

[4]- ՀՊՉ,հաստատված Հավելված 2, ՀՀ կառավարության 2021թ.փետրվարի 4-ի N 136_Ն , 2010թ ապրիլի 8-ի N439_Ն

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Կլինի սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու

բազմազանության մեջ:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Ազգային արժեքները համամարդկայինից չառանձնացնելով անգամ՝ ուսուցիչը, այնուամենայնիվ, ուսուցման ընթացքում չի կարող չընդգծել միայն հայ մարդուն և հայ հողին բնորոշ շատ արժեքներ, որոնց շնորհիվ պահպանվում են հայ մարդու դիմագիծն ու ազգային պատկանելիությունը: Կան միայն հայկական խորհրդանիշներ, որոնց կրողն ու շարունակողը հայ երեխան պիտի լինի: Դրանք պետք է որոնել հայոց լեռների ու ջրերի, ավանդույթների ու ծեսերի, քարի ու քարեղեն մարմնացումների, հողի ու ծառի, մարդկային այն որակների մեջ, ովքեր իրենց անուն-ազգանունով ազգային երևույթ են՝ Մաշտոց ու Մամիկոնյան, Համբարձումյան ու Թամանյան, Նարեկացի ու Չարենց. . . :

Այստեղ տեղին է ընդգծել ազգային մշակույթն ու պատմությունն ուսումնասիրող բնագավառների հետ միջառարկայական կապը:

Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք

առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:

Լեզու և հավատ «Հայ գրերի գյուտը: Մ. Մաշտոց: Կենսագրական տեղեկություններ: Կորյուն. «Վարք Մաշտոցի» երկը» թեմաների և զանազան մեթոդականարների միջոցով ամենից առաջ հետաքրքրություն պիտի առաջացնենք սովորողների մեջ՝ և Մաշտոցին, և նրա մեծ սխրանքը դիտարկելով որպես հայոց սրբությունների սրբոցը: Լրացուցիչ նյութ ենք ընտրում Արա Աբգարյանի «Անդորրության արարիծը» աշխատությունից. «Սուրբ Մեսրոպի տեսիլքը և հայոց գրերի գյուտը տեղի է ունեցել Բալու կոչվող բերդի մոտ գտնվող նեղ քարայրում, և այս բառի տառերի բառային իմաստները բնութագրում են բառն այսպես՝ Բ-Բանն, Ա-Աստծու, Լ-Լուսո, ՈՒ-ՈՒղերձ:

...Հայոց այբուբենն Աղոթք է. . . Սուրբ Մեսրոպը ճգնակեցական տքնությամբ, քառասնօրյա պասով և անդադար աղոթքներով էր Աստծուց ակնկալում ազգային ինքնության, ազգային Ոգու, Հոգու և Մարմնի արտահայտությունը. . . տառերի տեսքով, որը և նրան տվեց Տիրոջ լուսավոր Հրեշտակի և հրեշտակների Տիրոջ հայտնությամբ. . . »:[7]

Ըստ դասարանների կամ ուսումնական տարիների հաջորդականության, կապված դովորողների տարիքային աճի և հոգեբանական ու գիտակցական փոփոխությունների հետ, խորացվում են մայրենի լեզվի ու սուրբ հավատի ոգեղեն արժեքների մասին հաղորդումները՝ նորանոր զուգորդումների, լեզվական և խոսքային պատկերավորման միջոցների դրսևորմամբ:

Լույս և հայ: Լույս և զինվոր: Լույս և հավատ: Այս համադրություններն են ներկայացնում հայոց գրերը Մ. Գալշոյանի «Մամփրե արքան» պատմվածքի՝ հայոց դիցաբանության հերոսների հիշեցնող գրական կերպարին՝ ծերունի Մամփրեին: «Մաշտոցի գիրը նրա համար եփած հաց է, թևի տակ դրած հաց. . . », - խորհում է Մամփրեն համագյուղացու՝ Ավեի մասին: Իսկ նրա կարծիքով՝ Մաշտոցի տառերը «Տառերը զինվորներ են: Գեղեցկադեմ, մաքուր և զուլալ և արի զինվորներ: Զինվորներ: Ոչ թե ասկյարներ, այլ զինվորներ»[5]:

Արժեքային այս հստակ հոգեկերտվածքով սնված հայ պարմանիներն ու

պարմանուհիներն այսուհետ իրենց համար որպես հոգևոր հաց պիտի ունենան մայրենի լեզուն և նրա նկատմամբ պաշտամունքը: Ու նաև հպարտությունն այն բանի հանդեպ, թե «համայն աշխարհում այդ քանի երկիր. . . » սեփական հազարամյակներից եկած Այբուբեն ունի: Այդ հպարտությունն է քաջալերում Մամփրե արքային՝ մտովի դիմելու արյունարբու սուլթանին. «Դու սուլթան ես, բայց քո սեփական տառերը չունես և քո արյունոտ հրամանները գրում ես այլոց տառերով: Իսկ մենք թագավոր չունենք, բայց ունենք սեփական գիր: Եվ իմացած եղիր, որ Սուրբ Մաշտոցի գիրն էլ մեր թագավորն է. . . »:[6]

Մեր գիրը մեր թագավորն է: Այս միտքն էլ, որպես թևավոր դարձվածք, տեղ պիտի գտնի հայ դպրոցականի մտքում և հոգում:

Հայ երեխայի արժեքային համակարգի ձևավորման գործում կարևոր է նաև քարի, հողի, ջրի, Արարատ լեռան, մայր Արաքսի, սրբազան Արածանիի, հայոց խաչքարերի, մամռակալած վանքերի ու եկեղեցիների հանդեպ ակնածանքի, հիացումի, հպարտության զգացումների սերմանումը:

Հայ ժողովրդական առասպելաբանության, հատկապես՝«Սասնա ծռեր» դյուցազներգության, Հ. Թումանյանի «Սասունցի Դավիթ», Ավ. Իսահակյանի «Սասնա Մհեր» պոեմների ուսուցումը (կամ ուսուցչի կողմից հատվածական, ընթերցումները, որպես նախազգծային ածպատանքի հիմք՝ աշակերտներինուղղորդելը) դպրոցում պետք է ծառայեցնել հենց այս նպատակին: Արժեքային համակարգի սաղմերը «Սասնա ծռեր» դյուցազներգության հերոսների բարոյական նկարագրի մեջ են խտացված:

Ազատասիրությունն ու հայրենասիրությունը, որ մեր առասպելաբանության և «Սասնա ծռեր» դյուցազներգության գլխավոր գաղափարներն են, հայ դպրոցականը պիտի ընկալի այն տեսանկյունով, որ բարոյական այդ արժեքները դեպքից դեպք դրսևորվող երևույթներ չեն:

Ազնվություն, վեհանձնություն, ճշմարտություն, ազատասիրություն ու հայրենասիրություն. այն բարձր գաղափարներն են, որոնք հատուկ են հայ մարդուն, և

որոնցով նա հավասար իրավունքներով իր տեղն է զբաղեցնում համամարդկային արժեքներով հարուստ կլոր սեղանի շուրջ նստած աշխարհի մյուս ժողովուրդների կողքին:

Ազատասիրությունը, անկախության ձգտումը և արդար գոյամարտի գաղափարը Սասնա հերոսները, նրանց նախորդները և հետնորդները ժառանգել են Հայկ նահապետից: Այս բարոյական գծերը հայ ժողովրդի արյան մեջ են և հոսում են նրա երակներով: Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ տեղ գտած Հեթանոս դիցարանի աստվածների, կիսաստվածների առասպելական և պատմական հերոսների սխրալից արարքները պատկերող Գողթան երգերից, մեր հին վեպից մնացած պատառիկների մեջ գենետիկորեն անցնող բարոյական հատկանիշների շղթան վկայությունն է հայ տեսակի ազգային խառնվածքի ու դիմային ամբողջական բնութագրման՝ հյուրընկալություն, քաջություն, սխրագործություն՝ հանուն ազատության, արդարության, կառուցող ոգի, արժանապատվություն շիտակություն,իմաստնություն, հարգանք մեծերի հանդեպ, ծնողապաշտություն, սեր գրի և դպրության նկատմամբ և այլն, և այլն:

Ազնվությունն ու հպարտությունը հայոց տոհմիկ, արյան բաղադրամաս կազմող բարոյական արժեքներն են, և գրական երկում դրանք մարմնավորված են բառերի մեջ: Սարոյանի հերոսը՝ Արամը, ասում է. «Մենք աղքատ էինք: Մենք փող չունեինք: Մեր ամբողջ տոհմը ծայրահեղ աղքատ էր: Ամենակարևորը, սակայն, այն էր, որ մենք հոչակված էինք մեր ազնվությամբ»:[7]

Օտարն էլ էր այդպիսին ճանաչում հայ ընտանիքը. «Կերդվեի, որ իմ ձին է, եթե ձեր ծնողներին չճանաչեի: Ձեր ընտանիքի ազնվության համբավը լավ հայտնի է ինձ. . . »,- խոստովանում է ասորի ազարակատեր Ջորջ Բայրոն:(«Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը»[11]):

Վեհանձնության ու հպարտության ազնվական բարոյական արժեքները հայ թագավորներից և սպարապետներից փոխանցվել են սերնդեսերունդ: Սովորողը պիտի իմանա և գնահատի Մուշեղ Մամիկոնյանի վեհանձն արարքը. նա թշնամու գերի ընկած կանանոցը մեծ արժանապատվությամբ ուղեկցում է Պարսկաստան:

Սասունցի Դավիթը Թշնամու մորն ու քրոջն է բաշխում առաջին զարկերը, իսկ կռվից հետո, ականջալուր արաբ ծերունու իմաստնությանը, ազատ է արձակում Մսրա Մելիքի զորքին:

Հայոց պատմության մեջ հայ կնոջ և մոր կերպարը, ծնողապաշտությունը ևս մեծ արժեքներ են Տիգրանուհին(«Տիգրան և Աժդահակ» առասպելից), Եղիծեի մատյանի«Տիկնայք փափկասուն հայոց աշխարհի», որոնց նոր շուք հաղորդեց Մամիկոնյան Մեծ տիկինը, Խանդութը, Աստղիկը, Անահիտը(Դ. Դեմիրճյանի«Վարդանանք»), Այծեմնիկը՝ Անիի պաշտպանության քաջարի հայուհին, Փառանձեմ թագուհին(Բուզանդ, Ռաֆֆի), Սոսեն և այսօր արդեն նորօրյա հերոսուհիները:

Մարդասիրության ու բարության, կյանքում և արվեստում գեղեցիկն ու վեհը ընկալելու առումով սերունդներ են դաստիարակել Շիրվանզադեի Լևոնը («Արտիստը»), Նար-Դոսի Անտոնիոն («Ես և նա»), Թումանյանի, Զորյանի, Մահարու հերոսները:

Արժեքային համակարգ ձևավորում են նաև մեր պատմական հուշակոթողները: Գառնին ու Գեղարդը (հատվածներ ենք կարդում Կիմ Բակշիի, Վ. Բիտովի հոդվածներից (5-րդ դասարան)):

Հայոց խորհրդանիշներ են նաև նուռը, ծիրանը, սոսին, հայրենի հողը:

Վերոնշյալ արժեքները դասարանային մակարդակից արտադասարանայինի անցկացնելու համար կարող ենք կիրառել դասավանդման այսպիսի մեթոդներ, որոնք գործնականում հետաքրքրում են սովորողներին («Մեթոդ» բառը ծագում է հունարեն «մեթոդոսից», որը 2010թ բառացի թարգմանությամբ ռուսերեն նշանակում է «հետազոտության, տեսության ճանապարհ» և որևէ նպատակի կամ կոնկրետ խնդրի լուծման ճանապարհ:)

Մեր նպատակադրմանը աջակցում է, օրինակ, երբ հանձնարարում ենք բեմադրել հեքիաթը՝ հարստացնելով երկխոսությունները(5-րդ դասարան): Սովորողների ավելացրած երկխոսություններն արտացոլում են թեմայի հանդեպ նրանց դիրքորոշումն

ու վերաբերմունքը: Այդպիսով հնարավոր է դառնում ուղղորդել սովորողին դեպի ճիշտ արժեհամակարգ, ուղեկցել դեպի մնայուն արժեքների դաշտ:

Էքսկուրսիաներ - ուսուցման կազմակերպման այս ձևը,ևս, որում ուսումնական աշխատանքն իրականացվում է ուսումնառության օբյեկտների հետ անմիջական ծանոթության շրջանակներում, չափազանց տպավորիչ և ազդեցիկ է լինում: Դեպի Խ. Աբովյանի տուն-թանգարան այց-էքսկուրսիան բացում է սովորողների առջև հայրենի տունն ու հայրենիքը սիրելու և արժևորելու, ստեղծագործության արժեքները կյանքի առօրյային կապելու այնպիսի հորիզոններ, որոնք ազդում են այցելուի գիտակցական, դատողական ու ճանաչողական մտածողության վրա՝ խորացնելով հայրենասիրության գուցե չգիտակցված ազդակները:

Տնային աշխատանք կազմակերպման ձև է, որի դեպքում կրթական աշխատանքը բնութագրվում է ուսուցչի անմիջական ղեկավարության բացակայությամբ

Արտադասարանական աշխատանք. Գրական որևէ հերոսի մասին գարցաթերթիկ, խաչբառ, նկարելուկ-ռեբուս, հանելուկ հորինելը, վիկտորինաներն ու օլիմպիադաները ևս նպաստում և լավագույնս զարգացնում են սովորողների անհատական ունակությունները

ԿԱՊԿ ունեցող սովորողներն այս ամենի շուրջ կարող են կատարել քարտային աշխատանքներ՝ ըստ կարիքի: Կարող են կտրտած տառերով անուններ կազմել, նկարները համապատասխանեցնել անուններին , ներկել կամ նկարել ընկալածը:

---

[5]- Դ. Գասպարյան, Գրականություն,դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար, Երևան, Տիգրան Մեծ, 2016, էջ 191

[6]-Դ. Գասպարյան, Գրականություն,դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար, Երևան, Տիգրան Մեծ, 2016, էջ 192

[7]- Վ. Սարոյան, Գեղեցիկ, սպիտակ ձիու ամառը(արտադասարանային ընթերցանության ցանկից)

ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԱՍԻ ՆՄՈՒՇ_ՕՐԻՆԱԿ

ԴԱՍԱՐԱՆ՝ 6-րդ

ԱՌԱՐԿԱ՝ գրականություն

ԹԵՄԱ՝ Գ. Էմին «Պատգամ»(2 ժամ)// Բառի բաղադրիչներ

ՆՊԱՏԱԿՆԵՐ(1-ին դաս)

- ձևավորել դպրոցական հանրագիտարանից կամ կայքէջից (տարիքին համապատասխան) բանաստեղծության հեղինակի մասին տեղեկություններ հավաքելու, հետազոտելու հմտությունները
- զարգացնել չափածո տեքստը արտահայտիչ, վարժ ընթերցելու հմտությունը
- նպաստել տեքստի հնչյունական արտահայտչամիջոցները, անծանոթ բառերը ճանաչելուն
- զարգացնել բառարանների (տպագիր, էլեկտրոնային) օգնությամբ դրանց բացատրությունն ու հոմանիշները գտնելու կարողությունը

(2-րդ դաս)

- խթանել հայերեն գրագետ,բանավոր խոսքով բանաստեղծության բովանդակությունը վերաշարադրելու, սեփական կարծիքն արտահայտելու հմտությունը
- ըմբռնել տեքստում գրական կերպարի ճանաչման, բնագրի միջոցով բնավորությունը բնութագրելու, դեպքերի զարգացման ընթացքը տեքստից դուրս գրած փաստերով հիմնավորելու նրբությունները
- զարգացնել բանաստեղծությունը բեմադրելու և երկխոսություններով հարստացնելու կարողությունը
- ուսումնասիրել հայ մարդու(լեռնական հայի) բնավորությունն ու արժանիքները,
- արժևորել վեհությունն ու հզորությունն ընդգծելու , միասնականությունն ու

կամքը, բարեկամին հարգելու և դավադիրին զանազանելու կարողության ներկայացումը չափածո խոսքի միջոցով

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝

սովորողը

- գրականության տետրում ունենա էջ՝ նվիրված Գ. Էմինին՝ նրա մասին համառոտ տեղեկություններով
- արտահայտիչ և վարժ կարդա բանաստեղծությունը, բացատրի անծանոթ բառերը, ներկայացնի հոմանշային, հականշային զույգերը, բացատրի բառի կազմությունը
- հայերեն գրագետ, բանավոր խոսքով վերաշարադրի բանաստեղծության բովանդակությունը, ուրվագծերով ներկայացնի բանաստեղծության քնարական հերոսին՝ հայությանը կերպավորող հայ մարդուն, բնութագրի նրան, բնագրից բերված բառապաշարով հիմնավորի իր կարծիքը
- լեռնային նեղ ճամփեքին հանդիպող բարեկամ և դավադիր մարդկանց երկխոսության բեմադրությամբ արտահայտի սեփական վերաբերմունքը Հայկական լեռնաշխարհի, հայ մարդու բնավորության շուրջ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ՝ «Ներածական զրույց», «Հնգյակ»,«հարցուպատասխան», «Կրկնակի գրառումների օրագիր», «Քարտերով աշխատանք»

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ՝ գրականության դասագիրք, էջ 90-92, տետր, նշագրիչներ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45+45

ԸՆԹԱՑՔԸ՝

(1-ին դաս)

Կարճ հարցման միջոցով ստուգում ենք հին դասի յուրացումը և տնային աշխատանքը, կատարում շտկումներ(եթե անհրաժեշտություն կա), ամփոփում թեման, կատարում միավորային գնահատում, անցնում նոր թեմային:

Ներածական զրույց՝ նյութի ուսումնասիրությունից առաջ՝ աշակերտներին առաջիկա աշխատանքի մասին պատկերացում տալու նպատակով՝

- ինչպես ենք խոսում առօրյայում, ինչ հնչերանգով, ձայնի ինչ բարձրությամբ,
- երբ և ինչու է պետք զգույշ խոսել,
- արդյոք խոսելու հնչերանգով կարող եք բնութագրել մարդուն, ինչու եք այդպես կարծում:

(Ուսուցիչը հնարավորություն է ստեղծում, որ սովորողներն ազատ արտահայտեն իրենց կարծիքը, մտքեր փոխանակեն,շտկեն իրենց պատասխանը, դիմեն ընկերներին, քննարկեն ասելիքը և այլն):

Ունկնդրում ենք բանաստեղծությունը(օր.՝Ն. Ավետիսյանի կատարմամբ)// երգը(Ս. Ամրոյանի կատարմամբ):

Կարծիքներ ենք փոխանակում տպավորությունների մասին:

Ընթերցում ենք բնագիրը:

(Ընթերցելու հմտության զարգացմանն ուղղված վարժություններին զուգահեռ ընդգծում ենք հայերենի հնչյունական և բառապաշարային հնավորություններով ասելիքն արտահայտելու, գրողի կողմից բանաստեղծության հետաքրքիր կառուցվածք ընտրելու այս բանաստեղծության առանձնահատկությունները:)

Ձևավորում ենք խմբեր, որոնց հստակ բացատրվում է՝ ինչ պիտի անեն՝

1. «Հնչյունաբաններ»- ուսումնասիրում են բանաստեղծության կառուցվածքը՝տուն, հանգ, չափ,

2. «Իմաստագետներ» կատարում են դասագրքի էջ 92, վարժ. 1-3, պարզաբանում են «Ճամփեք»-ի կիրառումը «Ճանապարհների» փոխարեն,

3. «Բառագետներ»- բնագրում գտնում և դուրս են գրում կազմությամբ պարզ, ածանցավոր, բարդ բառերը, արմատներով կազմում նոր բառեր,

4. «Բեմադրիչներ» - երկխոսությամբ հագեցնում են բնագիրը, բեմադրում նեղ ճանապարհով անցնող երկու բարեկամ//չարակամ մարդկանց երկխոսությունը,

5.« Խորաթափանցներ»- բնագրից դուրս են գրում բառերի ուղիղ և փոխաբերական կիրառությունները, էջ 92, վարժ. 4-6 (դասագրքից),

6.«Նկարիչներ» -ըստ բանաստեղծության ներկապնակի՝ նկարագրում,նկարում են մեր հայրենիքը, նրա բնակչին, ընդգծել բնաշխարհի և բնակչի միասնական, ընդհանրական գծերը

7.«Փիլիսոփաներ»- արժևորում են բանաստեղծությունը որպես պատկերավոր մտածողության և հային բնութագրելու, մեզ ճանաչելու, հոգևոր զարգացման միջոց:

ԿԱՊԿ ունեցող սովորողների համար նախապես պատրաստում ենք քարտարան՝ հայկական խորհրդանիշերով, որոնք աշակերտը դասավորում և փակցնում է տետրում(ինքնուրույն կամ օգնությամբ):

Տրվում է ժամանակ, աշակերտները լրացնում են «Կրկնակի գրառումների օրագիրը»

Գիտեի // Իմացա // Բնագրի համապատասխան տողերը, վերլուծություն

(2-րդ դաս)

Սկսվում է աշխատանքների ներկայացմամբ: Ուսուցիչն ապահովում է բոլոր սովորողների մասնակցությունը, օգնում ճիշտ և գրագետ խոսքի կառուցմանը, հետևում սովորողների ներխմբային և միջխմբային համագործակցային և հանդուրժող վարքագծին: Յուրաքանչյուր խումբ իր հանձնարարության սահմաններում (և ոչ միայն) հայերեն գրագետ խոսքով արձակ կշարադրի բանաստեղծությունը, կհասկանա հերոսի ապրումներն ու հույզերը, կբացատրի բանաստեղծության խորհրդանիշերը, կարժևորի բանաստեղծությունը՝ որպես պատկերավոր մտածողության և հոգևոր զարգացման միջոց:

Ուսուցման գործընթացի մասնակիցները շեշտում են միջառարկայական կապերը հայոց պատմության, աշխարհագրության, արվեստ (ազգային երգ ու պարի, նկարչության հետ): (Խրախուսելի է, եթե սովորողները պարի(օրինակ՝ քոչարիի բեմադրությամբ) ցուցադրեն ուս ուսի պարող հայերի և հայկական լեռնապարի (լեռնաշխարհի) նմանությունը):

Դասի ամփոփման փուլում կատարում ենք «Հնգյակ» վարժությունը՝ «Հայ»

գլխաբառով:

Անդրադարձ՝ սովորողները վերլուծում և գնահատում են իրենց արած աշխատանքը (ինքնագնահատում), , նշում նկատած ձեռքբերումներն ու բացթողումները:

Ուսուցչի կողմից կատարվում է միավորային և խրախուսական գնահատում:

Տրվում է տնային աշխատանք՝ գրել փոքրիկ շարադրություն//բանաստեղծություն՝«Հայը և Հայաստանը» վերնագրով, նկարել կամ անգիր սովորել բանաստեղծությունը(ըստ ցանկության)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը: Մեզ համար շատ թանկ, կարևոր կողմնորոշումները, առանց որոնց չենք պատկերացնում մեր լիարժեք կյանքը, կոչվում են արժեքներ: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում:

Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում: Արժեքային համակարգն ուղղակի կապվում է բարոյականության հետ:

Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայման: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ

կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և ցավ, և ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք՝ ուսուցիչներս, կարողանանք ունենալ այնպիսի դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը:

Գրականության դասի՝ մեր կողմից ներկայացված նմուշը սույն աշխատանքում տեղադրել ենք որպես առաջարկություն՝ տվյալ թեմայի շրջանակում սովորողի արժեքային համակարգում հայրենասիրություն, ինքնաճանաչման, ներհայեցողության հնարավորության, սեփական և ազգային արժեքները գնահատելու և դրանցով հպարտանալու վերջնարդյունքին հասնելու նպատակով:

Ամփոփելով՝ նշենք, որ սովորողների արժեքային համակարգը ձևավորվում է ոչ միայն դպրոցի շենքային պայմաններում, այլև արտադասարանային պայմաններում ևս՝ միջավայրում, հասարակության մեջ, ուստի յուրաքանչյուր մեծահասակ պարտավոր է իր օրինակով, իր բարոյական և արժեհամակարգային կերպարով ու նկարագրությամբ

օրինակ լինել երիտասարդ սերնդին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1) Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:

2) Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:

3) Դ. Գասպարյան, Գրականություն,դասագիրք հանրակրթական դպրոցի 7-9-րդ դասարանների համար, Երևան, Տիգրան Մեծ, 2016

4) Գրիգորյան Զ. , Հայ գրականություն, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, Մակմիլան Արմենիա, 2009

5)ՀՊՉ, հաստատված Հավելված 2, ՀՀ կառավարության 2021թ.փետրվարի 4-ի N 136_Ն , 2010թ ապրիլի 8-ի N439_Ն

6) Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:

7)Վ. Սարոյան, Գեղեցիկ, սպիտակ ձիու ամառը(արտադասարանային ընթերցանության ցանկից)

8)Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ: